



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

### ՈՐՈՇՈՒՄ №- 20Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ  
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի ԹԻՎ 11Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի երրորդ մասի 10-րդ կետը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի հինգերորդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

### ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011 թվականի հուլիսի 21-ի «ՀՀ դատարաններում գործերի բաշխման պատահական ընտրության կարգը հաստատելու մասին» թիվ 11Լ որոշման 1-ին կետով հաստատված հավելվածով սահմանված կարգի 2-րդ պարբերությունում և 6-րդ կետի 2-րդ պարբերությունում «Սնանկության» բառից հետո լրացնել «, առևտրային արբիտրաժի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի դեկտեմբերի 1-ից:

Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահ

Ա.ՍԿՐՏՈՒՄՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 19  
ք. Երևան